

Ժամանակիս բամբակի առողջութը .

Արդի քաղաքականութեանս մէջ չկայ աշխարհքիս երեսը կողմ մը կամ գաւառ, ուր՝ որ և իցէ շարժմունք կամ փոփոխութիւն երենալով մեծ կամ փոքր, իրենց ազդեցութիւնը ընդ բովանդակ աշխարհս չծաւալեն : Կուռ և սերտ կապակցութիւնը, կամ մանաւանդ թէ ըսեմք՝ հաւասարակշութիւնն՝ որ սկսած է հաստատովիլ հիմա եթէ քաղաքավարական և եթէ քաղաքային վերաբերութեանց մէջ, պատճառ է ասոր : Օրէ օր այս կապակցութիւնը կ'աւելնայ և զգալի կ'ըլլայ : Ասկէ յիսուն տարի մը առաջ մինչդեռ Եւրոպա բովանդակ տակնուվրայ կ'ըլլար, աշխարհքիս մեծագոյն մասը իր կատարեալ հանդարտութեանը մէջ կը դանուէր . իսկ այսօրուան օրս Ամերիկայի պատերազմը՝ որ գրեթէ ընտանի ազգային խնդրոյ և տնտեսութեան վէճ մըն է, բոլոր աշխարհքս սարսեց, և զեռ իր ազդեցութիւնը վերջացած չէ : իսկ սարաման առիթը ոչ այնչափ զինուց ահաւոր խօշիւնն է, և ոչ թերևս արիւնահեղութեանց ազետալի տեսարանը, որչափ իրեն առևտրական ազդեցութիւնը, որ զարմանալի կերպով մը պատեալ և արմատացեալ է ընդ բոլոր տիեզերս : կարող եմք ըսել որ Ամերիկայի ցարդ հնդամեայ հասակացեալ պատերազմը՝ այժմէն բաւական եղաւ արդի ժամանակիս ոգւոյն և վիճակին բացայայտ և ճշգրիտ պատկերը և գաղփարը տալու . պատերազմի նոր կերպ գրգռմանը առիթ՝ մարդասիրական խընդիրը մը ըլլալը, — յանկարծ ազգի մը վաճառականական ոգին՝ 'ի պատերազմական կիրս փոխուիլը, — առաջին անգամ իրեն զինաշարժութեան ցուցած կիրթ հմտութիւնը . — պատերազմին իսկոյն առած ընդարձակութիւնը և գերածայր սաստկութիւնը . — ասոնք և այլ այսպիսիք անմիջապէս ժամա-

նակիս պարագայքն են առաջին անգամ՝ տեմնուած և լսուած . բայց զայսոսիկ թողով աշխարհաղիտի մը քննութեանը, և առաւել զանց առնելով անմիջապէս այս ժամանակիս յուղեալ խընդրոյ մը լուծումը, որում բոլոր աշխարհք սիրտ 'ի թնդոջ կը սպասէ, թէ երբ և թէ ինչպէս և կամ որովք պայմանագր յորդահոս արեանց գետահետութիւնքն պիտի դադարին և ոխացեալ դրգութիւնքն պիտի զիջանին . զասոնք կ'ըսեմ թողով քաղաքագէտ մոտաց, գանք ամ փոփենք զմեզ 'ի խորհրդածութիւն միոյ և եթ խնդրոյ, այն է բնտուել թէ բամբակի առուտուրին ապագան ինչ կերպարանք պիտի առնու և ինչ պայմաններ պիտի դնէ ամերիկեան պատերազմին զադարելովն . առեղծուած մը՝ որ ժամանակիս կարեսոր խնդիրներէն մէկը եղած է, և շատ մոգեր գրաւած, մանաւանդ յայսկոյս – ատլանդականացս, և թերևս բազմաց ևս 'ի մերոց ազգայնոցս : — Պատերազմին պարագաներէն յայտնի կերպով տեսնուեցաւ թէ ինչպէս ամենակարեսոր և ամենայն կերպիւ տարածեալ նիւթոյ մը մենավաճառութիւնը՝ յինքն գրաւեր է եղեր հիւսիսային Ամերիկա իբրև տնկագործ, իրբեւ մատակարար և իրբեւ վաճառականներն անհնար էր որ իրեն գործքէ քաշուելով՝ պատերազմի ստիպմունքէն՝ առիթ չըլլար մոգերը արթնցընելու և 'ի զործունէութիւն սրելու, որ այսպիսի հրզոր մենավաճառի մը պարապութեան ժամանակ՝ հակառակորդներ ելլեն, և իրեն ձեռքէն խլեն, զոր խլելը անհնարին էր այլ ատեն :

— Այո, ելան և յանդողեցան 'ի վեր քան զակնկալիս՝ շատ երկիրներ և աշխարհքներ, որոնք ծաղկեցուցին բամբակի մը շակութիւնը, յորս նշանաւոր եղաւ և մերս Աքսելք, անգործն թերևս յայլ ձեռնարկութիւնս : կարելի չէր լաւ ևս քան զայս օգտակար կերպով գործածել ժամանակին առիթը : — Սակայն չենք կրնար զմեզ աներկբայ ապահովել այս չորեքամեայ կամ հնդամեայ փորձով թէ ալ բացարձակ կերպով

զրկեցաւ Ամերիկա իր մենավաճառութենէն : Իրեն անգործութիւնը առժամանակեայ հանգիստ մըն էր երկրին : Անշուշտ չյապաղեր որ խաղաղութեան դարձիւն՝ վերադառնայ և յինքն իւր վաղեմի արուեստն, իբրև հին և ժառանգական տէր գործոյն : Այն ատեն ոչ փոքր առևտրական շփոթ պիտի յուզի ընդ հին և ընդ նոր տեսարմն, և ոչ փոքր այլայլութիւն 'ի տնտեսական կարգի : Այս այլայլութեան վրայ է որ քանի մը կարեոր խորհրդածութիւններ կ'ուզեմք մեր ընթերցողաց ազդել ընդ միոյ 'ի քաջաց տնտեսաբանից ժամանակիս :

Բամբակին առուտուրը թէ ինչ կերպարանկը պիտի առնու ընդհանուր Եւրոպայի մէջ՝ երբ դարձեալ սկսի Ամերիկայի անոր մատակարարութիւնը ձեռքը անցնիլ, իրեն առջի կանոնաւորեալ պայմաններովը, քննելու համար կարեոր է որ աչուրնիս մէյմը յետս դարձունեմք և քննեմք թէ ինչ վիճակի մէջ կը գտնուէր երբոր իրմէ առնուեցաւ այդ մատակարարութիւնը : Անժրիստելի է որ այդ ժամանակ առանց զմէկը մերձեցընելու իւր գործոյն, ինքն միայն կը բաւէր բոլոր Եւրոպիոյ գործարանաց նիւթ հասցունելու : Եւ չէ թէ միայն այլաշափ, այլ նաև իրեն պատրաստած նիւթը գերազանց էր, և թէ օրը օրուան ճիշդ կը հասցունէր, և այն պիտի առատութեամք, որ ամենայն դիւրութիւն կը չնորհէր գնողին ուզած ընտրութիւնն ընելու . յեւրոպիա միայն յուղարկածը 3 միլիոն և կէս հակ՝ էր : Աւելցընենք ասոնց վրայ նաև գնոյն յետին արժէութիւնը . առատութեանց տարիները այն աստիճանի անարդ գնոյ իջաւ, մինչև սովորական տեսակին լիպրէն կամ կէս հազարակամը 40 հարիւրողի կը վաճառուէր ըստ գաղղիական ֆրանկաց : Թերեւս տարօրինակ դէպք մըն էր այս, և հազիւ թէ շահեցուցիչ, բայց միջին գինը՝ տասնամեայ

ժամանակի մը մէջ լիպրայն ընդ 50 և ընդ 55 հարիւրոդ կը քալէր . և բաւական կը սեպուէր մշակողաց ծախկը գոցելու և օրինաւոր շահն ալ քաղել տալու . մինչև յօրէնս գրուիլ, և օրէ օր ալ հաստատուիլ փոխադարձ շահովն . և այս գնոյն այլայլութեան անզգալի ելեէն ալ ուրիշ բանէ չէր պատճառեր, բայց եթէ տարւոյն ըրած առատ կամ չափաւոր հունձքէն :

Այս պայմանիս մէջ կը գտնուէր բամբակին առուտուրը, երբոր գերեվար նահանգները գլուխ դարձուցին հիւսիսակողմն նահանգներէն, և վրայ հասաւ պատերազմական պաշարումը : Ծովային ճամբան գոցուեցաւ, և առ արտաքին երկիրս յարատե յուղարկը ընդհատելով՝ առևսորոյ մէջ վիճ մը բացուիլ սկսաւ, որ անյուսալի կ'երեւար այլով հնարիւք գոցելը : Այս դէպքիս առաջին արձագանզն եղաւ գիներուն բարձրանալը, որ և առևսորոյ կրած վընասոյն իրբև դարմաններկայացաւ . այլոչ էր իրական դարման, հապա բոլորովին արուեստական : Սովորական ժամանակ երբոր կանոնաւոր ընթացք մը ունէր բամբակին առուտուրը, վաճառականութիւնը՝ ինչպէս ուրիշ ապրանքներու վրայ, ասոր վրայ ալ նախադիտմունքներ՝ կ'ընէր, բայց զգոյշ կերպով մը : Այս նախադիտմունքը ըսամակութեամբ ապրանք մը կանխիկ կամ անմիջապէս գնել, և անյապաղ շուտ մը վաճառել : Դաշնագիրերը ըստ կարգի կը յօրինուէին, և ապրանքը ըստ պայմանագրին ճիշդ իւր սահմանեալ տեղը կը հասնէր ատենին . և որովհետեւ շահուն տարբերութիւնը ամենափոքը ինչ էր, գործն ալ չէր յերկարեր . գործակատարին ձեռքէն անմիջապէս կ'ելլէր և արուեստագործին ձեռքը մըն էր այս, և հազիւ թէ շահեցուցիչ, բայց միջին գինը՝ տասնամեայ

ծատունս յուղարկել։ Ասիկայ խաղ մըն
էր որ առուտուրին ոգի կու տար՝ առանց
չափազանց բռնկցընելու։ Բայց այս խա-
ղը բոլորովին տարբեր կերպարանք ա-
ռաւ երբոր բամբակի նուազութիւնը
սկսաւ։ Գիներուն առաջին խլրտումը
որ երեցաւ, ահա գունդ մը նորոց խա-
ղարկուաց յանկարծ դուրս ելան ան-
ծանօթ տեղերէ, և մէջ տեղը թափուե-
ցան, որպէս զի կարենան բան մը ձեռք
ձգել մէջտեղի տարտամութենէն. և ը-
րածնին ուրիշ բան չէր, բայց եթէ գնել
ու վաճառել ըստ ժամանակին և ըստ
բերման իրաց։ Մի և նոյն պորտայի մէջ
մի և նոյն մուրհակը քառասուն ձեռքէ
կ'անցնէր, և մէջ տեղը ապրանք մըն
ալ չկար։ Որչափ նուազ կու գար իրա-
կան բամբակը, այնքան երևակայական
առուտուրը կը տաքնար և ձեռքէ ձեռք
կը յափշտակուէր։ Ուստի ալ զարմանք
չէր որ զգալի կերպով գիները կրակի
զին ելլէն այս անխորհուրդ աճուրդ-
ներով¹։ Փոյթ ընող չկար որ այս ըստ
քմաց տուեալ գիները ժամանակին պայ-
մանին կամ գործատանց պէտքին հա-
մապատասխան ըլլան։ օրինաւոր կը
սեպուէր քանի որ առնող գտնուէր։
Բամբակը՝ որուն վրայ այս խաղերը կը
կատարուէին, իր բնութիւնը փոխեր
էր գոգցես. ալ չէր այն նիւթը՝ որ ա-
րուեստագործին ձեռքը պիտի անցնէր։
Ի՞նչպէս կարելի էր որ այս կերպով
բամբակը պորտայի տաքցած և բռնկած
սահմաններէն ելլելով և բեռնաւորեալ
անհնարին գներով երթայ գործատուն-
ները և արուեստաւորին ձեռքը անցնե-
լով՝ կարենայ անոր վաստակ մը ճարել,
ուրիմէ զնողքեգործածողք հանդարտ-
գլուխ իրենց խնայութեան հաշիւը կը
տեսնէին։ կը բռնադատուէին ուրեմն
գործատունք որ իրենց աշխատութիւնը
կամ 'ի կախ թողուն և կամ նուազե-
ցունեն, թէ որ կ'ուղէին գէթ բնաջինջ
կործանմանէ ազատ ըլլալ։

Սակայն նախախնամութեան կարգն
այլ էր։ Մինչդեռ հոս առուտուրի մէջ

այս ֆասակարութիւնները կը կատա-
րուէին, խումբ մը մարդկանց ձեռօք՝ նա-
խադիտելու մտօք, միւս կողմանէ չկար-
ծուած շահը և արգասիքն յառաջ գալ
սկսաւ նոյն պարագայէն։ Ինքնակամ
բարձրացած գիները խրախոյս տուին
գործունեայ մարդկանց բամբակի մշա-
կութիւնը հաստատել այնպիսի երկիր
ներու մէջ, ուր կամ բոլորովին պիտի
ստեղծուէր երկրագործութիւնը, և կամ
թէ վերջին անգործութեան մէջ ընկած
պէտք էր նոր արթնցունել։ Ամենայն
ինչ զիսէն սկսելու էր, եթէ ուղուէր
Ամերիկայի նմանիլ, որ չէ թէ միայն
բամբակը կը մշակէր, հապա ինքն էր
որ կը պայմանագրէր, ինքն էր որ գա-
շինքները կը հաստատէր, ինքն էր որ
յանձնառու կ'ըլլար ընդ ամենայն կողմ
յուղարկել՝ ուր որ պէտք ըլլար, ուրիշ
բան չթողով զնողին՝ բայց եթէ ապ-
րանքն ընդունիլ և գինը հաստոցա-
նել։ Արդ կը մնար զնոյնը հիմնել նաև
այն երկիրներու մէջ՝ ուր բերք յառաջ
բերելը ամենայն կերպով անշքացած
էր և երեսէ ընկած, ընդ նմին և ամե-
նայն կերպ գործունէութեան ողին։
Հին ճարտարութիւնները անգործու-
թեան մէջ թողած, նորերը տեղը ան-
ցած չէին։ կը մնար ուրեմն դաստիա-
րակել՝ 'ի գործդ, կառուցմունքներ կա-
տարել, և երկրագործական հնարքնե-
րու ձեռք զարնել։ Պէտք էր սերմանկը
բաժնել, կատարելագործեալ մեքենա-
ներ հայթայթել, մշակութեան վար-
պետներ յղել կամ թէ անոնց տեղը՝
այլ և այլ լեզուաւ վարդապետարաններ
ցրուել, որպէս զի տեղացիք ուսանին, և
կարող ըլլան իրենք իրենց զիսուն մշա-
կութիւններն ընել և ուրիշկարեսոր գոր-
ծերը՝ 'ի գլուխ տանիլ։ Բայց հիանալի ե-
զաւ որ անկարծելի գործը անկարծելի
ճգանց ձեռքով՝ 'ի գլուխ տարուեցաւ, և
չորս տարուան միջոց բաւական եղաւ
այս յեղափոխութիւնը գրեթէ լիովին
յաջողցունելու։ Արևելեան չնդկաստան,
Եղիպտոս և Տաճկաստան իրենց թրմ-
բրութենէն արթնցած, կրցան Ամերի-
կոյ ըրած բամբակի մատակարարու-

թեանը յաջորդըլլալ : Անյապաղ իրենց
այխատութեան պտղոյն ճաշակը առնը-
լով , ևս քան զևս խրախուսեցան լաւա-
գոյն եղանակաւ 'ի գլուխ տանել զիրն :
Այսօրուան օրս այս նորընծայ հողե-
րէն պտղաբերեալ բամբակին քանակը
թէպէտ դեռ Ամերիկոյ մատակարա-
րածին չհաւասարիր , սակայն շատ յա-
ռաջացեալ է : Ճիշդ հաշիւները կը ցու-
ցընեն որ այս երեք աշխարհաց վերջին
հունձքը հասած է ց2 միլիոն հակ . և
թէ շատ մըն ալ նոր պատրաստուած
երկիրներ կան , որոնք կը յուսացընեն
որ ներկայ տարույն հունձքը երրորդ
մասամբ մը պիտի աւելցունեն քան
զանցեալ տարուանը . որով 'ի մօտոյ
այս երկիրներէն սպասեմք ժողովել
2,500,000 հակ , որոնցմէ 1,600,000ը
'ի չնդկաց է , 300,000ը յեգիպտոսէ ,
200,000ը 'ի Տաճկաստանէ : իսկ Զին և
Ճարոն մնացած 400,000ը կը հայթայ-
թեն , իրենց օժանդակ ունելով զՊրա-
զիլ , զԱնդիլեանս և զԱփրիկէ : Այս տե-
սութենէն պէտք չէ անտարբեր անցնիլ :
Մեծ խորհրդածութեան նիւթ է թէ
ինչպէս չորս տարուան միջոցի մէջ կա-
րելի եղաւ հարկի բռնադատութեամբն
Ամերիկայէն դուրս և առանց Ամերի-
կայի կորուսեալ բերքի մը նոր կալուած
հիմնարկել : Քանզի և այդ 2,500,000
հակը գեռ նորածին մշակութեան վեր-
ջին ճիզն և սահմանը չէ : Թէպէտ և միւս
կողմանէ առ ժամանակեայ պիտոյից
նայելով՝ այդ 2,500,000 հակը այնպի-
սի քանակ մըն է որ առատ առատու-
թեամբ կը համապատասխանէ Միա-
ցեալ նահանգաց վերջին զարգացեալ
ժամանակ հայթայթեալ 3,500,000 հա-
կին . վասն զի գիներուն բարձրանալո-
վը բամբակեղինաց գործածութիւնը
շատ նուազած է , և միւս կողմանէ ալ
բրդեղէն և կտաւեղէն գործածները ա-
ւելի ընդարձակութիւն գտած են . ուս-
տի հարկաւորաբար կը պակսի բամբա-
կեղինաց պէտքը . և պէտքին նուազե-
լով՝ չգործած նիւթոյն ուզուիլն ալ կը
պակսի : Արդ գլուխ բանիցու խնդիրը
լուծուած է : Եւրոպէ սորվեցաւ ընդ

խիստ դաստիարակութեամբ հարկին՝
Ամերիկայի պէտքէն անցնիլ : Իսկ Ամե-
րիկայ շատ ճիզն պիտի թափէ իւր
առաջին մենավաճառութիւնը դար-
ձեալ ձեռք ձգելու՝ երրոր խաղաղու-
թիւնը հաստատուի , և չգիտեմք թէ
պիտի յաջողին և կամ թէ ցոր վայր :

Յիրաւի հետաքրքրելի է այդ մասին
մէջ խաղաղութեան հետևանքը , յո-
րում ընդարձակ սահման կայ վարկա-
ծից , սակայն ընդհանրագոյն կարծիքը
գրեթէ տարտամ անստուգութեան մը
մէջ տատանելն է : Տարակոյս չկայ որ
խաղաղութեան աւետաբեր ձիթենին
համաշխարհական ցնծութեամբ մը
պիտի ողջունուի : Եւ սոյն խաղաղու-
թեան գլխաւոր արգասիքը մեր խնդրոյն
նկատմամբ՝ այս պիտի ըլլայ , որ իրեն
վճռական ազգեցութեամբը՝ այն երկիր-
ները որ յարմարագոյնք են քան զայլ
կողմանս երկրի 'ի մշակութիւն բամբա-
կին , տիրապէս և անխախտ կերպով
նոյն գործոյն սեփհական ծառայու-
թեանը մտնեն : Եւ ասոր հետևանք այ-
նուհետև պիտի սկսի կանոնաւոր և ա-
ռատ կերպով ընտրելագոյն բամբակը
գործատանց մէջ յորդել , – գործաւո-
րաց անպակաս աշխատութիւն գրտ-
նուիլ , որոնք ընդ երկար տանջուեցան
կամ ստէպ ընդհատելով 'ի գործոյ և
կամ բոլորովին անզբաղ մնալով , – և
կարևոր ճարտարարուեստի մըն ալ
դէպ 'ի յառաջադիմութիւն դիմել , որ
գրեթէ բոլորովին անշբանալու վտան-
գին մէջ էր , եթէ առ նուազութեան և
եթէ առ ժանկութեանը և վատթարու-
թեան նիւթոյն : Ուստի անհնարին է
որ այսքան բարեաց առիթ եղող խա-
ղաղութիւնը՝ ծափածայն աղաղակաւ
չընդունուի ընդ բոլոր տիեզերս . և ան-
շուշտ կ'ընդունուէր ալ եթէ պարագայ
մը չըլլար իբրև կրծիմն յաջողութեանցս
գոնէ առ ժամանակ մի : – Այս պարա-
գան է պատերազմին և այնքան ան-
հանճար նախադիտմանց առուժերը մաք-
րելուն պէտքը : Հարկ է որ այս խընդ-
րոյն անցնինք հիմա , և բացարենք թէ
ինչու համար խաղաղութեան սիրով

արծարծեալ և վառեալ ոգիսն՝ իրենց զուարթութենէն պիտի մարին յանկարծ, երբ այս ահագին հաշուեցուցաւը տեսնեն :

Ինչպէս վերը ակնարկեցինք՝ ամերիկեան բամբակին սովորական տեսակին լիպրայն միջին գնով կ'արժէր նախքան զպատերազմը 50 և 55 հարիւրորդ։ Այս գինը հետզհետէ մղուեցաւ և բարձրացաւ մինչև ց², ց³, ց³ և կէս ֆրանք, որ է ըսել առաջնոյն գրեթէ եօթնպատիկը. և այս ոչ այնչափ սակաւագիւտ ըլլալուն պատճառաւ, որչափ խաղարկուաց գրգռմամբը։ Նովին առթիւ անարգագոյն բամբակներն ալ, ինչպէս են չնդկաստանի և Տաճկաստանի բամբակները, որոնց կէսը աղտոտ և օտար նիւթերով խառնած ըլլալուն՝ ամենեին իրեւ խոտան մէկդի կը ձգուէին ատենք, և միւս կէսը թեւլերուն կարծ և պինտ ըլլալուն համար մասնաւոր պէտքերու միայն կրնար գործածուիլ, սկսան բնտուուիլ և ձեռքէ ձեռք քաշքըշիլ, և ելան մինչև ց¹ ֆր. և 80 հար., ց² ֆր., և ց² ֆր. և 20 հար. և մինչև հիմա առուտուրի մէջ իրեւ յօրէնս գրեալ են այդ գիները։ Արդ երբ խաղաղութիւնը կնքուելու ըլլայ, անշուշտ իրեն առաջին գործը պիտի ըլլայ այդ անսովոր սղութիւնը մէջ տեղէն անհետ ընել։ Արդ համարինք թէ խաղաղութիւնը եկաւ, և սեպենք ևս որ իսկոյն առջի հին գիները ճշդիւ նոր գիներուն տեղը հաստատուեցան. որ է ըսել² և կէս ֆրանքէն իշնայ 'ի կէս ֆրանք, որով հիմակուան գնոյն վրայ առ նուազն չորս հինգերորդքը ցածցած կ'ըլլայ։ Արդ որովհետև առձեռն պատրաստ գտնուած բամբակի ապրանքը, առ նուազն՝ մէկ միլիար, որ է ըսել՝ հազար միլիոն կրնամք սեպել առանց չափազանցութեան, 'ի միասին առեալ ծովու վրայ, մթերանոցներու մէջ, գործատանց մէջ պահեստի դըրուած, և առուտուրի մէջ ցրուած բամբակները. և վերոյիշեալ կորուստը այս գումարին վրայ հաշուելով, սկզբնական հաշուով մը կը գտնենք, որ այս մէկ միւ-

լիարի վրայ չորս հինգերորդը վար ելնալով, 800 միլիոն բաց կը մնայ. ահաւո՞ր հաշուելուծումն¹, բազմաթիւ ձախորդութեանց գուշակ :

Տարակոյս չկայ որ չարաչար կերպով ներկայացուցինք այս հաշիւր. վասն զի համարեցանք որ խաղաղութիւնը յանկարծակի ցածցուցած ըլլայ գիները. մինչդեռ ամենայն հաւանականութեան տեղի կայ որ այս բանս աստիճանաբար ըլլայ և ոտն առ ոտն։ Այս ընթացքին ուղղիչ երկու պարագայք կան, որոնք այս կամ այն ճամբան բոնելէն կը կախուի վաճառատեղոյն ալ վիճակը։ Առաջին պարագայն է մթերեալ վաճառաց բազմութիւնը, որոնք՝ յորմէհետէսկաստ պատերազմը և նաւահանգիստը վակեցան՝ գիզուած և արգելուած մնացին ամերիկացի երկրակալաց ձեռք։ Երկրորդն ալ է մշակութեան արժողութէքին տարբերիլը, երբ գերութեան վերցուելովը՝ ծառայական աշխատութեան տեղ ազատակամ աշխատութիւնը յաջորդելու ըլլայ։

Մթերեալ վաճառաց վրայգը տըրուած տեղեկութիւնները խառնաշփոթք են և իրարու անհամաձայն. հարաւակողմեան կուսակցութիւնը յորմէ հետէ նշկահեց, ջանաց որ կեղծեօք և խորհրդաւոր ծածկութեամբք ինքը զինքը և իր վիճակը քողարկէ։ Ուստի այն համբաւը, իբր թէ կամաւոր հրձգութեամբ ինքն իր վաճառքները այրած է, անհաւատալի է. կարելի չէ որ այնչափ անմտացած ըլլայ, որ իւր անձին կործանման վիճը ինքն իւր ձեռօքը պեղած ըլլայ։ Ոչ ապաքէն իւր բամբակովն, էր որ որչափ քիչ ալ քշել կրցաւ, իր գանձը բըռնեց, իր զինուորները զինեց, և նաւաստիներ գումարեց. բայց հանգերձ այնու դեռ անբաւ ապրանք ձեռքը մնացած պիտի ըլլայ։ Երկպառակութեան նախընթացտարւոյն հունձքը 4,700,000 հակ ելած էր երկրէն, որոնց մեծագոյն մասը իր քովը մնաց երկրին պաշարու-

մը վրայ հասնելով։ Ըստ առևտրական ծանուցագրոց ունանց իր մթերանոցներուն մէջ մնացած բամբակեղինաց քանակը կը հասնի 1,500,000 հակ։ Այս հաշուին պակսեցուցած ըլլալուն վրայ տարակոյս չկայ. թէ և աւելի ալ սեպելու ըլլանք, բաւական է այսչափս ալ եւրոպիոյ վաճառանոցաց վրայ ոչ փոքր այլայլութիւն պատճառել, եթէ երբէք այդ 1,500,000 հակը միանգամայն հոն թափուելու ըլլայ։ Սակայն հարկ է որ երկու կողմանքն ալ խոհեմաբար շարժին. չափելու են որ իրենց յուղարկները ժամանակին պիտոյից համեմատ ըլլայ, և զգուշանալ այն ամեն բանէ որ կրնայ խառնաշփոթ այլայլութիւններ բերել և այլայլել հաւասարակշռութիւնը։ Ինքն իսկ Ամերիկայ այդ բանին մէջ աչալուրջ ըլլալու է. ուղղակի իւր շահուն միտ դնելով՝ որ գիները վար չձգէ, զի կրնայ անով իւր մնան ալ հիւսել։

Ոչ փոքր անստուգութիւն կը նշմարի նաև երկրորդ պարագային հետևանացը վրայ. այն է՝ երբոր մշակութիւնը ծառայական ձեռքէ ազատ ձեռաց անցնելու ըլլայ։ Այլուր եղած փորձերը միայն ունիմք իրրե միջոց՝ այս դէպքիս վրայ ուղիղ դատաստան ընելու, և կը տեսնենք որ յաջող գացած չեն, բայց և ոչ ալ անոր վճռական որոշողութիւն մը տրւած տնտեսական գործոց մէջ։ Մեծապէս հետաքրքրելի է տեսնել թէ այս գերեաց ազատութիւնը ի՞նչ կերպարանք պիտի առնու հիւսիսային Ամերիկացւոց ձեռքը։ Վերջի ժամանակիս զինեալ երկրի մը մէջ և ահազին խառնաշփոթ շարժմանց ատեն գերեաց ցուցած զգաստութիւնը կը վկայէ որ այդ տեղւոյն տէրերը մասնաւոր գաղտնիք մը և հնարք մը ունին կամաց իշխելու և հպատակութիւնն պահել տալու։ Տարակոյս չկայ որ այդ հնարքը նոյն ազդուութեան մէջ չմնար երբոր գերութեան լուծը վերնայ։ Այն ատեն պիտի տեսնուի որ երկու ցեղ մարդիկ թուով իրարու հաւասարակշռ, մէկ աշխարհիքի մը մէջ կեցած, մէկուն գործունէութիւնը զիւ-

րաւ պիտի գերազանցէ միւսոյն թուլամորթութեանը վրայ։ Եւ զասոնք իրարու հետ համաձայնելու մէջ ալ ամերիկեան հանճարոյն հնարագիտութիւնը անտարակոյս պիտի չպակսի։ Վարձուց հատուցունքը, շահու հրապարը՝ ապահովել պիտի ջանան մշակութիւնը որ երեսէ չձգուի։ Բազկաց անբաւական երեցած տեղը՝ մեքենաները պիտի օժանդակեն, և ամենենին առիթ պիտի շտրուի կալուածատեարց, որ իրենց վաղեմի խնամքով արգասաւրեալ երկիրը՝ անտապատ դառնայ և կոչտանայ։ Իսկ թէ գերեաց չնորհեալ ազատութիւնը բամբակի տնկագործութեան պայմաններուն վրայ պիտի ծանրանայ, բաւական տեղի չեմք գտնենք այդ կասկածանաց։ Թէ ուշի ուշով քնընելու ըլլանք, արդէն վերջի ժամանակները ծառայական աշխատութիւնը սկըսած էր անբերելի ըլլալ տնկագործաց, անոնց գնոյն և պահեստին ծանրացեալ ծախիւքը։ Խարչիկ մը 5000 ֆրանքի գնուելով ցկեանս ստացուածք, այս գնոյն վրայ շահը և իւր սպառեցումը՝ ՚ի միասին հաշուելով, 8 առ ½ արժած կ'ըլլար տիրոջը. ասոր վրայ պէտք է աւելցունել նաև 50 կամ 55 հարիւրորդ ֆրանքի միջին օրական ծախիւքը վասն մննդեան և այլոց պիտոյից, որ ընդ ամենայն 600 ֆրանքի կ'ելլէ տարին. զոր թէ որ երեքհարիւր աշխատելի օրերուն վրայ բաշխելու ըլլանք, օրը 2 ֆրանք կ'իյնայ։ Այս գինը արդէն քաղաքականացեալ աշխարհաց մէջ ազատ մարդու միջին սակն է։ Գերւոյն ազատելովը անշուշտ պահանջածը ստորին պիտի ըլլայ քան զայդ գումարը, ուր արդէն իւր աշխատութիւնը նուազելով, ձեռաձիրն ալ համեմատ կը չափաւորի։ Բայց զիարդ և է աներկրայաբար ինքնակամ ծառայութիւնն այնքան ճիզն և գործ չգումարեր, ինչպէս որ բունի և քատմնելի միջոցներով կանոնի տակ ձգուած աշխատութիւնը։

Այս երկու յիշատակեալ պարագայից վրայ, որոնք քիչ շատ հաւանականաբար պատճառ պիտի ըլլան որ չկարենան գիները յանկարծակի իջնել, աւելցունենք նաև պատերազմին պատճառաւ առանձնականաց գոյից կրած շփոթութիւնները, հասարակաց գանձուն մէջ ընկած տոյժերը, ուր մէկ կողմանէ վաճառականութիւնը իր հաշուետումարաց գոցուիլը տեսաւ, միւս կողմանէ ծովագնաց առուտուրը իր ապրանքներուն կորստեամբը մասսեցաւ, և երկրագործութիւնն ալ իր մուտքերուն առվորական գումարը նուազեցուց։ Այս ամեն տարերքը պէտք է որ դարձեալ նորոգուին. սակայն գրծուարին համբերութեան և երկայն ժամանակի գործ. այնպէս որ ամերիկեան բամբակին մատակարարութիւնը մինչև որ իւր առջի վիճակին հասնի՝ շատ և շատ տարիներ պիտի անցնին, և թէ քանի որ ծառայական աշխատութենէ յազատ աշխատութիւն անցնելու զբաղած է, չկարենայ պիտի Ամերիկա մեր վաճառատեղեաց վրայ երենալ իր ապրանքներուն առջի անհուն քանակովը և իւր նախկին ամենաչափաւորեալ գնովը։

Այսօրինակ գիներու փոխանցութեան ժամանակին յերկարիլը՝ առիթ պիտի ըլլայ որ Եւրոպա և Արևելք իրենց հաշիւները կանոնաւոր կերպով սրբեն։ Գիներուն վար իյնալը մեղմանալով, ճարտարարուեսաք և վաճառական ասով իրենց կործանմանէն առաջ կարենաւոր պիտի գտնեն իրենց ձեռքը գտնուած վատթար ապրանքները վրաներնէն թօժափել։ Եւ միանգամայն ասով իրենց կործանմանէն պիտի խալքին այն նորահաստատ մշակութիւնները՝ յորս երկրիս այլայլ կողմերը ձեռք զարկած գտնուած են, համարձակութիւն առնելով Ամերիկայի գործէ քաշուելէն. և ոչ երբէք պիտի կարենային սկսիլ և բարգաւաճիլ այսպէս քանի մը տարուան մէջ, մինչև որ հիմակուան գիներուն բարձրութիւնը չըլլար։ Այսպիսի են Արևելեան Հընդկաստան, Եղիպտոս, Ճաճկաստան,

Պրազիլ։ Բայց դեռ բաւականապէս զօրացած չեն որ հին զիներուն յանկարծական դարձին կարենան դիմանալ. ապա թէ ոչ այն անկարծելի յաջողութիւնը որ իբրև փրկութիւն չնորհեցաւ բիւր ձախողութեանց առիթ կ'ըլլայ և անբաւ աղետից, եթէ զիներուն բարձրութիւնը յանկարծօրէն վերցուի։ Մանաւանդ՝ զոր չէ պարտ զանց առնել նկատելէն, առաջիկայ խաղաղութիւնը պատճառ պիտի ըլլայ որ այլ և այլ երկիրներէ եկած բերքերուն վրայ խիստ քննութիւն և մանրակրկիտ ընտրութիւն ըլլայ գործատանց ձեռքք։ Վասն զի կան թերութիւնք որ չեն երևար ՚ի ժամու կարօտութեան, բայց երրոր այս կարօտութիւնն անցնի, խստիւ կը դատուին նաև ամենէն մանր պարագայք, որ արուեստաւորին դժուարութիւն կը պատճառէ, կամ ճարտարարուեստ գործոյն արատ կը բերէ։ Այն ժամանակ խորհրդածութեան պիտի առնուի որ Հնդկաց բամբակը ստորին տեսակէն է, և թէ շատ խառնուրդ ունի, և մեծապէս նենդեալ է, մինչև աւելի քան ըզչափ անցնիլ տեղացոց անհաւատարմութենէն. և թէ՝ ասոնցմէ զատ՝ ունի նաև տեղոյն հեռաւորութեան անպատշաճութիւնը Եւրոպիոյ գործարաններէն։ Եղիպտոսի բամբակին մէջ աւելի հաւատարմութիւն կայ և տեսակն ալ վերագոյն է, բայց անշուշտ իրեն բարձր գինէն հարկ է որ վար իջնայ։ Ճաճկաստանի բամբակը թերևս անարգուի՝ ընտիր տեսակէն չըլլալուն համար իրեն թելերուն կարճ և թանձր ըլլալովը, բայց սակայն մասնաւոր պէտքերու կը ընայ ծառայել։ Արդ այս օժանդակ երկիրներուն արդիւնքը որ կարօտութեան ժամանակ ընդունելութիւն գտան, երբոր խաղաղութեան ժամանակը դառնայ, քննութեան տակ պիտի ձգուին, և պիտի սահմանուին թէ պէտք են որ իրենց գործը առաջ տանին թէ չէ, և թէ որ երկիրն է որ մշակելի պիտի ըլլայ, և որը ոչ։

Այս ըսածներնէր քիչ շատ կրնայ գուշակուիլ թէ ինչ զգալի փոփոխու-

թիւն պիտի առնուն՝ երբոր այս յեղա-
փոխութեանց ժամանակները համնին՝
այն երկիրները որոնք վերջի ատեններս
բամբակի մշակութեանը ձեռք զարկին
կամ այն առտիճան առաջ տարին, որ
անծանօթ էր մինչև այն ատենը. այս
յեղափոխութիւնը իրաք բոլոր երկրա-
գրնոյս վրայ շրջան մը պիտի առնու,
և ամեն կողմ և ամեն խորշ եթէ մօտ
և եթէ հեռու՝ իր տպաւորութիւնը պի-
տի ձգէ : Առանձնականաց աւերմունքը
հասարակաց աւերմունքէն պիտի ծան-
րանայ : Հնդկաստան և Եգիպտոս չկը-
ցան իրենց գանձը հաստատել եթէ ոչ
բարեբաղդ դիպուածովս որ աշխարհքիս
շահաւորագոյն առուտուրը իրենց յանձ-
նուեցաւ . թէ որ այս բաղդը վերջանա-
լու ըլլայ, նեղութիւնքն նորանց կը
սկսին, և վախճանն յուսահատ : Ոչ ինչ
նուազ է նաև Եգիպտոսի և Տաճկա-
ստանի համար : Արգելուկը որ այդ կե-
ղակարծ դիպուածքն չպատահին, 'ի
վեր է քան զկարողութիւն մարդոյ . մէկ
հատիկ ապաստանարան փրկութեան է
'ի հաշուելուծմանն . և այս եթէ յաջողի,
ինչպէս երկար խօսեցանք, զիները կա-
րեոր պայմանին մէջ մնան : Բարեբաղ-
դաբար այս գործն 'ի բնութեան իրաց
է . մարդկային կամքէն անկախ, որ և
ոչ կարող էր ստոյդ ապահովութիւն
տալ : Գիները արդի պայմանին մէջ մը-
նալով, հասարակաց հաշուելուծումը
կրնայ անզգալի ըլլալ . այն է ժամանակ
վաստըկելով՝ հասարակաց վրայ բաժ-
նել վնասուն ծանրութիւնը, և մասնա-
կից ընել եթէ գործածողը, եթէ ար-
դիւնարար տնկագործը, և եթէ միջ-
նորդ վաճառականը :

Ի վախճան բանիցս, առանձնացընե-
լով մեր խօսքն Արևելքի կամ Տաճկա-
ստանի վրայ, ուր մեր ազգայինքն մա-
սամբ տեղաբնակ և մասամբ մօտաբնակ,
թէ բախտին և դիպուածոց շնորհած
պարգել բամբակին շահավաճառով
լիովին իրենց ձեռքը չմնայ, յոր մեծաւ
գործունէութեամբ խրախուսեցան, գո-
նէ ուրախ կարեմք լինել և վատահ յա-
պագայն, որ երկրագործական արհես-

տին սկսելովը, շատ տեղ հողի կոշտերը
փշրեցան և բահերը փայլեցան, և անոնց
փայլը ցոլաց մնդերուն վրայ, և յու-
սամք թէ ալ չեն խաւարիր :

Նոր հսկայ ծառ մը .

Պրազիլի օրագիրները բուսաբանա-
կան նոր հսկայ մը կը ծանուցանեն մե-
զի, որ կը գերազանցէ ինչուան հիմայ
ծանօթ վիթխարի ծառերը : Այս հսկան
գտեր է գերմանացի բնագէտ մը որ եր-
կայն ժամանակէ 'ի վեր կը քննէ Ամա-
զոնայ գետոյն և անոր օժանդակներուն
եզերքները : Ռիոյ-Պրանգոյի ափանց
բուսարձակութիւնը անհաւատալի կեր
պով հարուստ է . հոն տեսաւ և այս
վիթխարի ծառը, որ բամբակային ը-
սուած ծառերու ցեղին կը վերաբերի .
տարածութեամբ շատ աւելի ընդարձակ
է քան զափրիկեան պաօպապը . ճիւ-
ղերն այնպիսի կանաչագեղ պսակ մը
կը ձևացնեն, որուն տակը տասն հա-
զար հոգի կրնան հանգիստ պատսպա-
րիլ, և իր շուքը մէկ ընտանիք մը կե-
րակրելու բաւական եղող դաշտ մը կըր-
նայ ծածկել : Այս անուանի ծառը խիստ
սովորական է բարձր-Ամազոնի գաւա-
ռին մէջ, ուր ընդհանրապէս գետեզեր-
քը կ'աճի . գրեթէ հասարակածին տակ
ինկնալով՝ կարգէ դուրս սնունդ և ոյժ
կ'առնու :

Թուշոյոյու անուամբ մեծամարմին
թռչունն ալ կը բնակի ասոր ճիւղերուն
մէջ՝ և խիստ բարձր թառելուն համար՝
չվախճան ոչ Հնդկին նետէն և ոչ հրա-
ցանի գնտակէն :